«ԿԱՆԹԵՂ» ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Դասի պլանավորում: Պլանավորման արդյունավետ եղանակների ընտրությունը

ՀՀ Լոռու մարզի թիվ 28 հիմնական դպրոցի

ուսուցիչ՝ **Ռուզաննա Սուքիասյան**

2023 թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Ի՞ՆՉ Է ԴԱՍԸ

2. ԴԱՍԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

3. ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Միայն այն ուսուցիչն է իր գործում հմուտ, ով լավ գիտի, թե ինչ է պետք իմանա իր աշակերտը և ինչ ճանապարհով պետք է հասնի այդ գիտելիքներին»:

Վ.Ա.Սուխոմլինսկի

Գիտության զարգացումը մեզ լավ հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչպես է տեղի ունենում սովորելու գերծընթացը: Դիտարկենք այն: Երբ արտաքին աշխարհից տեղեկատվություն ենք ստանում, այն սկզբում առնչվում է մեր կարճաժամկետ և աշխատանքային հիշողությանը: Որպեսզի կարողանանք արտաքին աշխարհից տեղեկություն ստանալ, մեզ պետք է ուշադրության կենտրոնացում: Ուշադրությունը կարևոր է ոչ միայն ուսուցման համար, այլև այսօր համարվում է մարդու կյանքի կարևորագույն ռեսուրսը:

Ուսուցչի կարևոր մասնագիտական գործառույթը դասի պլանավորումն է, որը նպաստում է դասապրոցեսի արդյունավետ դասավանդմանը: Աշակերտների պահանջները կանխորոշելու և դասավանդումն արդյունավետ իրականացնելու նպատակով մենք պետք է պլանավորենք նաև գնահատման գործընթացը: Դրանով հնարավորություն է ընձեռնվում որոշել, թե արդյոք աշակերտները յուրացրել և ըմբռնել են պահանջվող գիտելիքները: Ուսուցչի գործունեությունը նպատակային է, երբ հասնում է առաջադրված նպատակին: Իսկ առաջադրված նպատակին հասնելու համար անհրաժեշտ է արդյունավետ պլանավորել դասը, որը կնպաստի ուսումնառության ընթացքում աշակերտի առաջադիմության բարձրացմանը:

Դասը պլանավորելիս, ուսուցիչը պետք է նկատի ունենա և՛ ներկա, և՛ հետագա խնդիրների լուծումը: Դասի պլանավորումը իրենից ներկայացնում է թեմատիկ պլանում արտացոլված՝ աշխատանքի, նպատակների, բովանդակության, միջոցների հնարքների և ձևերի հստակեցումն ու մանրա-

մասումն առանձին դասի շրջանակներում : Դասի ամենօրյա պլանավորումը դասի արդյունավետության , մտահաղացումների արդյունավետ իրագործման հրամայականն է :

Արդյունավետ դասավանդման համար նորօրյա դպրոցի ուսուցչին ան - հրաժեշտ է ոչ միայն դասավանդող առարկայի խորը և բազմակողմանի իմացություն , այլև դասավանդման նպատակների հստակեցում և վերջնարդյունքների ապահովում : Դրան հասնելու լավագույն միջոցը դասի պլանավորումն է:

Հետազոտության նպատակն է պարզել , թե որքանով է արդյունավետ դասի պլանավորումը ուսուցման գործընթացում :

Ի՞ՆՉ Է ԴԱՍԸ

Դասը մանկավարժական գործընթացի հիմքն է, ուսուցման կազմակերպման հիմնական ձևը: Այն սովորողների կրթության, զարգացման և դաստիարակչական խնդիրների լուծման համար պարբերաբար կիրառվող գործընթաց է, որոշակի ժամանակահատվածում ուսուցիչների և սովորողների գործունեության կազմակերպման ձև: Այն նաև միևնույն տարիքայի խմբի կրթության կազմակերպման ձև է, կոնկրետ օրակարգով (դասացուցակ) և բոլորի համար միասնական կրթական ծրագրով: Յուրաքանչյուր առարկայի դասն անց է կացվում ուսումնական ծրագրի համաձայն: Արդի մանկավարժության մեջ ներկայացվում են հետևյալ դասի տիպերը.

1.**Նոր նյութի հաղորդման դասեր:** Սովորողի կողմից նոր նյութի յուրացումն է, որին տրամադրվում է դասի մեծ մասը: Դասի ընթացքում կարող են գործածվել այնպիսի եղանակներ ինչպիսիքն են դասախոսությունները, բացատրությունները, առանձին հարցերի շուրջ զրույցները, քննարկումները, ինքնուրույն աշխատանքները և այլն:

2. **Կարողությունների ու հմտությունների ձևավորման և ամրապնդման դասեր** (հիմնական ձևերն են. գործնական, ինքնուրույն, լաբորատոր աշխատանքներ):

3.Գիտելիքների և կարողությունների ստուգման և շտկման դասեր (թեմատիկ գրավոր աշխատանքներ, շարադրություններ և փոխադրություններ):

4.**Համակցված դասեր** (մեկ դասաժամի ընթացքում հնարավոր է լուծել մի քանի դիդակտիկական խնդիրներ, գիտելիքների ստուգում, նոր նյութի հաղորդում, ուսուցանվող նյութի շուրջ որոշակի աշխատանքների կազմակերպում և այլն):

ԴԱՍԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Ուսուցման գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է դասապրոցեսի ճիշտ պլանավորումով, որը կարելի է ներկայացնել հետևյալ հաջորդականությամբ՝ նախապատրաստական աշխատանքներ դասից առաջ, բուն դասը և վերլուծական աշխատանք, որը պետք է կատարվի դասից հետո: Դասի ճիշտ պլանավորման համար անհրաժեշտ է դասի խնդիրների և նպատակների հստակ գիտակցում: Այն ենթադրում է պատասխանել հետևյալ հարցերին՝

ա) ի՞նչ սովորեցնել

բ) ինչու՞ սովորեցնել

գ) ինչպե՞ս սովորեցնել:

Ուսուցիչը պետք է դասը այնպես պլանավորի, որպեսզի օգնի աշակերտին՝ ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերել:

Ուսումնական գործընթացում գլխավոր ծանրաբեռնվածությունը պետք է ընկած լինի ո՛չ թե աշակերտի հիշողության, այլ մտածողության վրա: Ուսուցումը պետք է լինի ո՛չ թե վերարտադրողական, այլ ստեղծագործագործական գործունեություն:

Աշակերտը գիտելիք պետք է ստանա ո՛չ թե պատրաստի ձևով (ուսուցչի հաղորդումից, դասագրքից) այլ ինքնուրույնաբար, որոնողական, հետազոտական կամ համագործակցային աշխատանքի արդյունքում: Այս ամենը աշակերտի մեջ առաջացնում է հետաքրքրություն, նպաստում է դժվարությունների հաղթահարմանը, դրական վերաբերմունք է ձևավորում ուսման նկատմամբ, խթանում է ստեղծագործական մտածողության զարգացմանը:

Դասի պլանավորումն ունի պարտադիր բաղադրիչներ՝

1.ուսուցիչը սահմանում է իր տեսլականը,

2.առաջադրում է այն քայլերը, որոնք պիտի կատարեն ուսուցիչներն ու

աշակերտները ,

3.սահմանում է այն արդյունքը , որին պիտի հասնեն աշակերտները դասի վերջում :

Ուսուցման արդյունքը կարող է լինել ընդհանրական , այսինքն՝ թե տվյալ դասի ընթացքում ինչին է ձգտում հասնել ուսուցիչը սովորողի հետ համատեղ գործունեության արդյունքում : Ուսուցչի նպատակը կարող է լինել ինչ – որ բանի մասին գարափար տալը , ինչ - որ բան ձևավորելը կամ զարգացնելը:

Ուսուցման խնդիրներն այն են , թե ուսուցիչն ինչ է նախատեսում ուսուցանել կամ լուսաբանել դասի ընթացքում : Դրանք պետք է բխեն նպատակից , պիտի ծառայեն վերջնարդյունքների ձևավորմանը , հասկանալի լինեն և հետաքրքրեն սովորողին :

Դասին նախապատրաստվելու կարևոր մասն է կազմում նաև դասասենյակի կահավորումը՝ տվյալ դասի ընթացքից բխող պահանջներին համապատասխան : Ուսուցիչը պետք է դասավորի նյութերը , համապատասխանեցնի կահավորանքը և համոզվի՝ արդյոք օգտագործվելիք տեխնիկական միջոցները սարքին են : Դասը պլանավորելիս ուսուցիչը պետք է նկատի ունենա և՛ ներկա , և՛ հեռակա խնդիրների լուծումը , ինչպես նաև պետք է հաշվի առնի նախադրյալները . աշակերտն ի՞նչ նախնական գիտելիք ունի այդ թեմայից և ինչ հմտություններ պետք է ունենա դասը հաջող յուրացնելու համար :

Դասից առաջ ուսուցիչը պետք է խորհի հետևյալ հարցերի շուրջ .

- Որքանո՞վ են իմ ակնկալիքներն ու սպասումները իրատեսական :
- Ինչպե՞ս կարող եմ համոզվել , որ աշակերտները պատրաստ են իմ կողմից ընտրված մեթոդական վարժությունը կատարելու :
- Ինչպե՞ս պետք է կառուցեմ դասի ընթացքը :
- Իրատեսական է արդյոք այդ դասի ընթացքի պլանավորումը ըստ ժամանակի :
- Ինչպե՞ս կարող եմ գնահատել աշակերտների ձեռքբերումները , ի՞նչ չա-

փանիշներով :

●Առարկայի նկատմամբ ինչպիսի վերաբերմունք եմ ուզում ձևավորել սովորողների մոտ :

Դասի պլանը կազմելիս պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնել ժամաբաշխման վրա , որի ճիշտ բաշխումը և նրան հետևելը ամբողջ պլանավորված գործընթացի իրականացման և բարձր արդյունավետության երաշխիքն է :

Յուրաքանչյուր դասի պլանավորումը ենթադրում է ստեղծագործ և լուրջ աշխատանք , որի արդյունքում ուսուցիչը գտնում է և մշակում է այն ձևերն ու հնարները , որոնք տանում են դեպի դասի նպատակների իրականացումը :

Ուսումնառության նպատակները , խնդրիները և ուսումնառության վերջնարդյունքները հաճախ օգտագործվում են որպես հոմանիշներ : Այս բոլորը կապված են դասավանդման և ուսումնառության հետ : Սակայն ուսումնառության վերջնարդյունքների , նպատակների և խնդիրների միջև եղած տարբերությունն այն է , թե ով է իրականացնում գործողությունը:

Ուսուցման նպատակներն ու խնդիրները նկարագրում են , թե ինչ է մտադիր անել ուսուցիչը կամ դպրոցը , մինչդեռ ուսումնառության վերջնարդյունքը պիտի լինի չափելի և հասանելի , որին սովորողը կարող է հասնել դասի (ուսումնական նախագծի) արդյունքում :

ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության դպրոցներում խմբային ուսուցման հիմ - նական ձևը դասն է : Դասն ունի մի շարք աավելություններ պարապ - մունքների այլ ձևերի համեմատությամբ , քանի որ այն ունի կուռ կազմա - կերպչական կառուցվածք , փոխադարձ ուսուցման համար ստեղծում է ավելի լայն հնարավորություններ և պայմաններ , դաստիարակում է խմբային գործունեություն և մրցակցություն , զարգացնում սովորողների ընդհա - նուր պահանջները և այլն : Դասի սկիզբն ապահովող լավագույն մեթոդներից մեկը մտագրոհի մեթոդն է : Մտագրոհի միջոցով ուսուցիչը հավաքում է մտքեր տվյալ թեմայի վերաբերյալ : Մտագրոհի ժամանակ կարևոր է մտքերի քանակը : Կարևոր է նաև , որ աշակերտները առանց երկար մտածելու պատասխանեն ուսուցչի հարցին , որպեսզի ուսուցչի համար պարզ դառնա նաև այն սխալ պատկերացումները , որոնք թեմայի վերաբերյալ ունեն աշակերտները :

Նոր նյութի բացատրության ժամանակ պետք է հաշվի առնել այն հանգա- մանքը , որ աշակերտը չի կարող միանգամից շատ բան սովորել : Հետևա – բար ՝ նոր նյութը բացատրելիս ուսուցիչը պետք է ուշադիր լինի , որպեսզի չգերազանցի այդ ծավալը : Ծավալը գերազանցելու դեպքում աշակերտի աշխատանքային հիշողությունը չի կարող ընկալել նոր նյութը : Նոր նյութը բացատրելիս կարևոր է օգտագործել գծապատկերներ :

Դասի պլանավորման հիմքում դիտվում է ուսուցման և դասի կառուցման եռաստիճան մոդելը՝ խթանում , իմաստի ընկալում և կշռադատում :

Խթանման փուլի հիմնական նպատակն է ՝ օգնել աշակերտներին ի մի բերել դասանյութի վերաբերյալ իրենց նախնական գիտելիքները , շարժել նրանց հետաքրքրությունները և սովորելու նոր դրդապատճառներ ստեղծել : Խթանման փուլի հիմնական նպատակներից են ՝ բացահայտել սովորողների գիտելիք-

ները նոր նյութի վերաբերյալ քննարկվելիք նյութի մեջ ներգրավվելով՝ ակտի-վացնել աշակերտներին, աշակերտների մոտ ձևավորել գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու ձգտում:

Մեթոդներ, որոնք հարմար են կիրառելու դասի խթանման փուլում՝ մտագրոհ, խմբավորում, ձնագնդի, հինգ բոպեանոց ազատ աշխատանք:

Իմաստի ընկալման փուլի նպատակներն են՝ սովորողի մոտ հետաքրքրության աճի պահպանումը, տեղեկատվության ընկալման ինքնավերահսկման ապահովումը, նոր և հին տեղեկատվության շաղկապումը և իմացության նոր կառույցի ստեղծումը:

Մեթոդներ, որոնք հարմար են կիրառելու դասի իմաստի ընկալման փուլում- T-աձև աղյուսակ, Վենի դիագրամ, խճանկար, երեք բանալի և մեկ կողպեք:

Կշռադատման փուլի նպատակներն են՝ սովորողը նոր ստացած տեղեկատվությունը կարողանա արտահայտել իր բառերով և ձևակերպումներով, նոր գիտելիքների միաձուլում ունեցածին և դրանց աստիճանական ինտեգրացում:

Մեթոդներ, որոնք հարմար են կիրառելու կշռադատման փուլում՝ քառաբաժան, խորանարդում:

Ուսուցիչը դասը կարող է դասը պլանավորել բազմազան եղանակներով: Պետք է նախապես որոշի թե դասի համար որն է լավագույն եղանակը, յուրացման ինչպիսի խորություն է հարկավոր, ինչպիսի հասկացություններ այդ դասից պետք է յուրացնի աշակերտը, ինչ եզրակացության պետք է հանգի դասի արդյունքում:

Առանձնացրել եմ մի քանի մեթոդներ, հնարներ, մանկավարժական մոտեցումներ, որոնք դասը կդարձնեն հետաքրքիր և արդյունավեր:

ՏՀՏ-ի կիրառումը դասապրոցեսին

Ժամանակակից դպրոցում շատ են կարևորում և խրախուսում հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառությունը: ՏՀՏ–ի գործածությամբ հնա–

բավոր է հարուստ, բազմերանգ, դինամիկ ուսումնական նյութ ստեղծել և օգտագործել: Դրա միջոցով կարող ենք նաև ուսումնական բովանդակությունը դարձնել ինտերակտիվ: Արդյունքում աշակերտը ոչ թե տեղեկատվության պասիվ ստացողն է, այլ հենց ինքն էլ կարող է փոփոխել ու նույնիսկ ստեղծել ուսումնական բովանդակությունը: Սա երեխայի մոտ զարգացնում է պատասխանատվության զգացում:

Հայտնի է, որ մարդկանց մեծամասնությունը մտապահում է լսածի 5%ը, իսկ տեսածի 20%ը: Ձայնային և լսողական տեղեկատվության միաժամանակյա օգտագործումը բարձրացնում է մտապահելու ունակությանը մինչև 40 – 50%: Տեխնոլոգիաները մեզ հնարավորություն են տալիս ուսումնական նյութը ներկայացնել զանազան ձևերով և ուսումնական նյութն ավելի արդյունավետ է դառնում:

ՏՀՏ-ի կիրառումը դասապրոցեսի տարբեր փուլերում:

1.Նոր թեմայի ներկայացում

Դասի թեման ներկայացվում է լուսանկարների, տեսանյութերի, գծագրերի, շարժանկարների ձայնի օգնությամբ: Նմանատիպ դասերի ընթացքում ստեղծվում է իրական շփման իրավիճակ, աշակերտները ուսումնական նյութի հանդեպ մեծ հետաքրքրություն են ցուցաբերում:

2.Ուսուցչի բացատրությունների ուղեկից

Օգտագործվում են կոնկրետ դասերի համար ստեղծված նյութեր՝ համառոտ տեքստեր, գծագրեր, նկարներ, տեսանյութեր, անիմացիաներ: Նման դեպքերում երեխաները ձգտում են իրենց մտքերն արտահայտել սեփական բառերով և հաճույքով են կատարում առաջադրանքները, իսկ ներկայացված նյութը լինում է կիրառական, տեսանելի և հասկանալի:

Համատեղ դասավանդում

Ներառական դասարաններում բոլոր երեխաներին դասավանդելու համար

կիրառվում է մի մոտեցում , որը հայտնի է որպես համատեղ դասավանդում: Համատեղ դասավանդումը ուսուցիչներին հնարավորություն է տալիս անհրաժեշտ աջակցությունը ունենալու հնարավորություն միաժամանակ աշակերտների համար ապահովելը ներգրավվածություն դասապրոցեսում : Համատեղ դասավանդումը մանկավարժների կամ այլ մասնագետների գործընկերությունն է ՝ դասարանի ներսում տարբեր կրթական կարիքներ ունեցող աշակերտներին դասավանդելու համար :

Համատեղ դասավանդելով ՝ երկու մանկավարժներ (հիմնական ուսուցիչ և հատուկ մանկավարժ) աշխատում են միևնույն դասասենյակում : Համատեղ դասավանդումը , ի տարբերություն մեկ ուսուցչի կողմից դասավանդվող դասի, բոլոր աշակերտներին (այդ թվում առանձնահատուկ պայմանների կարիք ունեղող) ընձեռում է ներառվելու և ներգրավվելու առավել լայն հնարավորություններ :

Համամատեղ դասավանդման նպատակը հանրակրթական դպրոցներում իրենց տարեկիցների հետ կրթության աձանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների առավել արդյունավետ ներառումն է : Բացի այդ , միայն ուսուցչի կողմից կազմակերպվող դասավանդման համեմատ , համատեղ դասավանդումը տալիս է ավելի բազմազան և ստեղծագործական դասավանդման մեթոդների կիրառման հնարավորություն , մեծացնում է ուսուցիչների և բազմամասնագիտական թիմի անդամներին տրամադրվող աջակցությունը ՝ աջակցելով դասավանդման ժամանակ կիսելու , ռեսուրսներն առավել արդյունավետ օգտագործելու հնարավորություն :

Համատեղ դասավանդման ձևերից է աջակցող դասավանդումը : Այս դասավանդման ընթացքում .

- մեկ ուսուցիչը դասավանդում է , առաջնորդում ողջ դասարանը , իսկ մյուս ուսուցիչը , որպես օգնական , դիտարկում է առանձին աշակերտների վարքը և տարբերակված , առանձին ուղղորդումներով օգնում է նրանց ՝ առավելագույնս ներգրավվելու դասապրոցեսին ,
- երկրորդ ուսուցիչը օգնում է գլխավոր ուսուցչին ՝ հասնելու հիմնական

նպատակին , ինչպես նաև օգնում այն աշակերտներին , ովքեր ուսուցչի հրա-
հանգները ընկալելու հետ կապված լրացուցիչ աջակցության կարիք ունի :

Ինտեգրված դաս

Ինտեգրված դասը ժամանակակից մեթոդիկայի նորույթներից մեկն է : Ինտեգրված դասի միջոցով արտահայտվում են միջառարկայական կապերը : Ինտեգրված դասերը բազմակողմանի գիտելիքներ են ապահովում , բովանդակալից ու հետաքրքիր են դարձնում ուսումնական գործընթացը : Այն իրականացնելու համար պահանջվում են նախապատրաստական լուրջ ջանքեր , սակայն փորձը ցույց է տվել , որ դասերի արդյունավետությունը բավականին բարձր է :

« Ինտեգրում » բառը նկատի ունենք տարբեր առարկաների , ուսումնական նյութերի մեջ մի ամբողջություն՝ փոխադարձ իրար լրացնող՝ և՛ իմաստով , և՛ ձևով : Այն չափազանց գրավիչ ձև է սովորողների համար , սովորողներին տալիս է լիարժեք պատկերացում նյութի վերաբերյալ : Ինտեգրված դասերը հաճախ ուղեկցվում են բացահայտումներով և հայտնագործություններով , առաջ է գալիս ստեղծագործականությունը , ստեղծագործական աշխատանքը :

Ուսումնական նյութերը պետք է լինեն մատչելի , ոչ ծանրաբեռնված : Դասարանում ուսումնական գործընթացը պետք է համապատասխանի սահմանային ծավալին : Սովորողը պետք է ստանա այնքան տեղեկություն , որ չխճճվի նյութերում : Ինտեգրված դասի արդյունքում սովորողը , ոչ ստիպողաբար, տանը կատարում է առաջադրանքները , հետազոտում է, ապա ներկայացնում և խրախուսվում :

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կատարված հետազոտության արդյունքում կարելի է գալ հետևյալ եզրակաց-
ման՝ ժամանակակից ուսուցչի խնդիրն է ապահովել որակյալ կրթություն, աշխատել անմնացորդ նվիրվածությամբ, յուրաքանչյուր աշակերտի ընդունել սեփական երեխայի նման, վերաբերվել ինչպես ձևավորված անհատականու-
թյան, հասկանալ նրա հույզերն ու զգացմունքները, ճիշտ մոտեցումներ ցույց տալ:

Նրանցից յուրաքանչյուրի ներաշխարհը բացահայտելով, փնտրել և գտնել նոր ձևեր, մեթոդներ դասը ճիշտ և գրագետ կազմակերպելու համար: Սույն աշխատության նպատակն է առաջարկվող հետաքրքիր մեթոդների, հնարների կիրառման միջոցով դասի ընթացքը դարձնել ավելի ակտիվ, մասնակցային, խրախուսել վերլուծական, քննադատական միտքը աշակերտների շրջանում: Ամենօրյա կազմված դասապլանները, այսօր ուղեկից պետք է դառնան ուսուցչին և լինեն հաջողված աշխատանքի լավագույն գրավականը:

Դասի պլանավորումը թեմատիկ պլանում ներկայացված աշխատանքի նպատակների, խնդիրների, բովանդակության միջոցների ու ձևերի հստակեցումն է: Յուրաքանչյուր դասի պլան պետք է հանգամանորեն մշակել, կցել այդ պլանին համապատասխան դիդակտիկ նյութ, սահմանել առաջադրանքների չափանիշերը:

Եվ իհարկե, ուսուցչի աշխատանքի ինքնավերլուծությունը պետք է դառնա ուսուցչի գործունեության անբաժանելի մասը: Դասի շնորհիվ կարողանա ինքնակատարելագործվել, խուսափել սխալներից, ինքնակրթվել և ի վերջո, ապահովել բարձր կրթական մակարդակ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Ս. խաչատրյան « Ուսուցման արդյունավեր հնարներ » Երևան 2020 թ

2.Ա. Հ. Սվաջյան և ուրիշներ « Ուսուցչի օգնական ձեռնարկ » , Երևան 2020թ

3.Ա. Խ. Գրիգորյան « Ուսուցման տեխնիկական միջոցները » , Երևան 1989թ

4.Ա. Տեր-Գրիգորյան « Հայոց լեզվի մեթոդիկա » , Երևան 1980 թ

5.Ա. Հովհաննիսյան և ուրիշներ « Համագործակցային ուսուցում », Երևան 2006թ

6.Հ. Այվազյան « Դասի կառուցվածքային տարրերի կիրառումը հանրակրթական առարկաների օրվա պլանների կազմման գործընթացում » , Երևան 2014թ

7. Սիրունյան Անտոնյան Ս. , Վանեսյան Ս. « Թեմատիկ պլանավորումն ըստ չափորոշչային պահանջների » , Երևան 2014թ